

ԱՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ
6 -ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 1

Շրջան, քաղաք _____

Ուսհաստատություն _____

Դասարան _____

ԱԱՀ _____

Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է **21** առաջադրանք:

1-4-րդ, 10-րդ, 13-րդ և 21-րդ առաջադրանքները լրացնել:

5-րդ, 9-րդ և 16, 17-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

6-8-րդ, 11, 12-րդ, 14, 15-րդ և 18-20-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը ~~3~~ և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Թեստ-գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է **1** միավոր, սխալը՝ **0**:

Թեստ- գրքույկի առավելագույն միավորը՝ **21**:

Աշխատանքի կատարման համար տրվում է **50** րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

2018 - 2019

1-4-րդ առաջադրանքները լրացնել

1. Խոսակցական են կոչվում այն բառերը, որոնք _____ :
2. Հնչյունների ամեն պատահական խումբ չի կարող _____ կոչվել:
3. Բառապաշար ասելով հասկանում ենք հայերենի _____ :
4. Արտահայտությունը գրել մեկ բառով:
Տուփ, որի մեջ պահվում են գարդերը - _____
5. Համապատասխանեցնել.

Բառ

- 1) բույր
- 2) ամառ

Ածանց

- ա) ուկ
- բ) ավետ
- գ) ենի
- դ) ային

Պատասխան՝ 1- ____, 2- ____

6. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

Ո՞ր շարքի բոլոր բառերի ուղղագրությունն է ճիշտ:

- | | |
|-------------------------------|---------------------------------|
| 1) գօրծարար, ամանօրյա, տնորեն | 3) օրըստօրե, միօրինակ, մեղմօրոր |
| 2) վոլֆրամ, մեղմօրեն, նախօրոք | 4) անօրակ, վոկալ, ոսկեգոծ |

7,8-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

7. Ո՞ր բառերում է գրվում *-դ-* :

- 1) աղո...ք, 2) արծակուր..., 3) անծրևոր..., 4) հար...ություն, 5) ար...յունք

8. Ո՞ր բառերում է արտասանվում չգրվող *-ը-* հնչյունը:

- 1) համրանալ, 2) մտածել, 3) դեղնավուն, 4) թարտալ, 5) հառնել

9. Համապատասխանեցնել.

Բառ

- 1) թ...չել
- 2) հ...փանալ
- 3) գղ...ալ
- 4) բաղ...անք

Տար

- ա) ռ
- բ) ջ
- գ) ը
- դ) ղ
- ե) խ
- զ) չ
- է) ծ
- ը) ց

Պատասխան՝ 1- ____, 2- ____, 3- ____, 4- ____

10. Լրացնել.

«Մի կյանքի պատմություն» ստեղծագործության հեղինակն է՝ _____ :

11,12-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

11. Ո՞ր բառն է համապատասխանում նախադասությանը:

Երեխան վախից 1) սպրդել, 2) սփրթնել և կուչ էր եկել անկյունում:

12. Ընտրել այն բառը, որը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:

Ջրի ափին ինձ է նայում 1) ծաղկած դաշտը:

2) բուրավետ

3) արբած

13. Լրացնել աղյուսակը.

Գրել տրված բառերի գրքային տարբերակը:

<i>Խոսակցական</i>	<i>Գրքային</i>
իրիկուն	
հանաք	
թուշ	

14,15-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

14. Բայց արևի լույսի տակ,
Երբ ցավեր եք ինձ բերում,
Սրտիս մռայլն անհատակ
Այն խեղճ ճրագն է ցրում:

Բանաստեղծական տողերը գրել է

- 1) Հովհաննես Շիրազը
- 2) Վահան Տերյանը

- 3) Վարդգես Բաբայանը
- 4) Եղիշե Չարենցը

15. Բոստաններից միշտ կգար տուն՝ բերելով բույրը հողի,
Ու ես գիրկը կընկնեի, կսուզվեի ողջ գիշեր
Համեմների մարգերը ու մարգերը թարխունի.

.....

Բաց թողած տողն է՝

- 1) Իմ թոթովանքն էր թռչում՝ հայրիկ, բոստան կտանե՞ս...
- 2) Կարծես աշխարհն էր մտնում մեր խրճիթի դռնով ներս....
- 3) Մանուկ սիրտս հեքիաթի դրախտներում կշրջեր...

16,17-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում

16. **Դարձվածք** **Բացատրություն**
- | | |
|----------------------|--------------------------------|
| 1) աչքը ջուր կտրել | ա) շատ երկրներ շրջել |
| 2) երես առնել | բ) համարձակվել |
| 3) քաղցր աչքով նայել | գ) շատ սպասել |
| 4) ճամփա կտրել | դ) ուշադիր լինել մեկի նկատմամբ |
| | ե) շփանալ |
| | զ) ճանապարհի գնալ |
- Պատասխան՝ 1-___, 2-___, 3-___, 4-___

17. **Ստեղծագործություն** **Հեղինակ**
- | | |
|---------------------|-----------------|
| 1) « Հացը » | ա) Գ Մահարի |
| 2) « Պապն ու թոռը » | բ) Ս. Խանգաղյան |
| 3) « Իմ տատը » | գ) Հ. Մաթևոսյան |
| | դ) Մ. Սարյան |
| | ե) Ս. Զորյան |
- Պատասխան՝ 1-___, 2-___, 3-___

18-20-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

18. **Իմաստով ճիշտ բացատրված բառերն են՝**
 1) գորովալից- սիրով լցված, 2) գետնել - անպատվել, փնովել, 3) անամոք- ապաքինված, սփովված, 4) բրուտանոց- կավագործի արհեստանոց, 5) մատուռ- փոքր աղոթատեղի

19. **Քաղմիմաստ բառերն են՝**
 1) խոր, 2) տուն, 3) գիրք, 4) մեծ, 5) եռահարկ

20. **մաքուր** բառին հոմանիշ են՝
 1) անեզր, 2) անապակ, 3) անբիծ, 4) պղտոր, 5) անվա

21. **Գրել պատասխանը:**
Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերումը:

Հայրս ամեն ինչ անում էր իր ընտանիքի կյանքն ապահովելու համար: Վերջապես ինքնուրույնություն էր ձեռք բերել և ապրում էր շրջապատված զավակների բանակով:
 Աշխատում էր, դատում և գոհ էր դրանից: Կյանքի ծանր պայմանները չէին չարացրել նրան....

Պատասխան՝ _____

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց սանդղակով	

Ստուգող՝ _____
 Ա.Ա.Հ _____
 ստորագրություն